ՏԵՂԵԿԱԴԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1951 *Общественные науки*

Ա. Հակոբյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Հասարակական-տնտեսական ֆորմացիաների ծագման, նրանց պատմության պերիոդիզացիաների հիմնական սկզբունքները մշակել և գիտականորեն հաստատել են մարքսիզմի կլասիկները։

Այդ սկզբունքները խորացրեց և զարգացման ավելի բարձր աստիճանի հասցրեց ընկեր Ստալինը իր «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» ու «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատություններում։

Մարքսիզմի-լենինիզմի կլասիկները և առանձնապես ընկեր Ստալինը, նշել են երեք հիմնական, առաջնակարգ և գլխավոր գործոններ, որոնք որոշում են «հասարակության ֆիզիոնոմիան, հասարակարգի բնույթը, հասարակության զարգացումը մեկ հասարակարգից դեպի մյուսը»։ Անդրադառնալով այդ հարցին, ընկեր Ստալինը գրել է՝ «Հասարակության զարգացման պատմությունը, ամենից առաջ, արտադրության զարգացման պատմությունն է, դարերի ընթացքում միմյանց փոխարինող արտադրաեղանակների պատմությունն է, արտադրողական ուժերի և մարդկանց արտադրական հարաբերությունների զարգացման պատմությունը»։[1]

Ընկեր Ստալինը միաժամանակ ուսուցանում է, որ հասարակության պատմությունը նաև «նյութական բարիքներ արտադրողների իրենց պատմությունն է...». «ինչպես որ հասարակության արտադրական եղանակն է— այնպես էլ հիմնականում հասարակությունն ինքն է, այնպես էլ նրա իդեաներն ու թեորիաները, քաղաքական հայացքներն ու հիմնարկներն են»։[2]

Ակնհայտ է, որ հասարակական-տնտեսական այս կամ այն ֆորմացիայի պատմության պերիոդիզացիան կատարելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ արտադրության եղանակում տեղի ունեցած փոփոխություններն ու զարգացումը՝ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների բնագավառում և անմիջական արտադրողի տնտեսական և սոցիալական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները։

Մարքսիզմի կլասիկները միաժամանակ մեզ ուսուցանում են, որ հասարակական-տնտեսական այս կամ այն ֆորմացիայի պատմությունը, նրա պատմական զարգացման առանձին էտապները շարադրելիս միայն տնտեսական, բազիսային երևույթները չէ, որ պետք է հաշվի առնել ու նրանցով որոշել պատմության զարգացման հիմնական էտապները։ Հասարակության պատմության պերիոդիզացիան կառուցելը բացառապես էկոնոմիկայում տեղի ունե-

* Տպագրվում է մտքերի փոխանակության կարգով։ Խմբ.

[1] Համ(բ)Կ պատմություն, համառոտ դասընթաց, Երևան, 1946 թ., էջ 166։

[2] Նույն տեղում, էջ 165։ Համմ. Ф. Энгельс, Развитие социализма от утопии к науке, 1936, г. стр. 32.

ցած փոփոխությունները նկատի ունենալով, անխուսափելիորեն մեզ կկանգնեցներ գռեհիկ տնտեսական մատերիալիզմի դիրքերում։

Դեռ 1890 թ. Ֆ. Էնգելսը Յոսիֆ Բլոխին գրած իր նամակներից մեկում, անդրադառնալով այս պրոբլեմին, գրել է.

«Պատմության մատերիալիստական ըմբռնողության համաձայն պատմական պրոցեսում որոշիչ մոմենտը վերջին հաշվով հանդիսանում է իրական կյանքի արտադրությունն ու վերարտադրությունը... Ավելի որևէ մեկն այդ դրույթն աղավաղում է այն իմաստով, որ իբր տնտեսական մոմենտը հանդիսանում է միակ որոշիչ մոմենտը, ապա դրանով նա այդ պնդումը վեր է ածում ոչինչ չասող, վերացական, անմիտ ֆրազի։ Տնտեսական կացությունը— այդ բազիսն է, բայց պատմական պայքարի ընթացքի վրա ազդում են նաև, և շատ դեպքերում որոշում են նրա ձևերը, առավելապես վերնաշենքային տարբեր մոմենտները...։ Այստեղ առկա է այդ բոլոր մոմենտների փոխազդեցությունը, որի մեջ վերջ ի վերջո, տնտեսական շարժումը, որպես անհրաժեշտություն, իրեն ճանապարհ է բացում անվերջ բազմաթիվ պատահական դեպքերի միջով»։[1]

Ընկեր Ստալինը իր «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունում գիտականորեն որոշեց բազիսի և վերնաշենքի փոխհարաբերությունների, փոխազդեցությունների հարցերը։

Նշելով, որ ամեն մի բազիս ունի իրեն համապատասխանող վերնաշենք, քաղաքական-իրավական հայացքներ և սրանց համապատասխան հաստատություններ, որ եթե փոխվում, լիկվիդացվում է բազիսը, ապա դրանից անմիջապես հետո փոխվում և լիկվիդացվում է նրա վերնաշենքը, ցույց տալով բազիսի ակտիվ, առաջնակարգ դերը, նրա վճռական նշանակությունը հասարակության, հասարակական արտադրական հարաբերությունների զարգացման գործում, ընկեր Ստալինը միաժամանակ ուսուցանում է, որ վերնաշենքը պասսիվ չէ, չեզոք չէ, որ նա իր հերթին հանդիսանում է մեծագույն ակտիվ ուժ։

«Վերնաշենքը,— գրում է ընկեր Ստալինը,— ծնունդ է առնում բազիսից, բայց այդ ամեննին չի նշանակում, թե այն միայն արտացոլում է բազիսը, թե այն պասսիվ է, չեզոք, անտարբեր է վերաբերվում իր բազիսի ճակատագրին, դասակարգերի ճակատագրին, հասարակարգի բնույթին։ Ընդհակառակը, լույս աշխարհ գալով, նա դառնում է մեծագույն ակտիվ ուժ, ակտիվորեն ժամանակում իր բազիսին՝ ձևավորվելու և ամրապնդվելու, ձեռք է առնում բոլոր միջոցները, որպեսզի նոր հասարակարգին օգնի՝ մինչև վերջը ջախջախելու և լիկվիդացնելու հին բազիսն ու հին դասակարգերը»։[2]

Այս իսկ պատճառով, հասարակության պատմության ամեն մի պերիոդիզացիա պետք է համապատասխանող կերպով ընդգրկի տվյալ պատմական էպոխայի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական, կրոնական, կուլտուրական, իդեոլոգիական և այլ կարգի հարցերն իրենց ամբողջության մեջ վերցրած։

Երկրորդ կարևոր գործոնը, որ մենք կարող ենք դնել պերիոդիզացիայի հիմքում՝ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխհարաբերությունն է։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Избранные письма, Огиз, 1948, стр. 422.

[2] Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951, էջ 13։

Ընկեր Ստալինը, խոսելով արտադրության առանձնահատկությունների մասին, գրում է՝ արտադրության առաջին առանձնահատկությունն այն է, որ «նա երբեք երկար ժամանակ մի կետի վրա չի մնում և միշտ գտնվում է փոփոխման և զարդացման վիճակում, ընդորում արտադրության եղանակի մեջ տեղի ունեցող փոփոխություններն անխուսափելիորեն առաջ են բերում ամբողջ հասարակարգի, հասարակական իդեաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների վոփոխում,— առաջ են բերում ամբողջ հասարակական և քաղաքական կացութեան վերակառուցում»։ «Արտադրության երկրորդ առանձնահատկությունն այն է, որ նրա փոփոխություններն ու զարդացումը միշտ սկսվում են արտադրողական ուժերի փոփոխություններից ու զարգացումից, ամենից առաջ— արտադրության գործիքների փոփոխություններից ու զարգացումից»։ Արտադրողական ուժերը հանդիսանում են արտադրության ամենից ավելի շարժուն և ռևոլուցիոն տարրերը, պայմանավորում են արտադրական հարաբերությունները, սակայն արտադրական հարաբերությունները «շատ երկար ժամանակ չեն կարող ետ մնալ արտադրողական ուժերի աճումից և այդ աճման հետ հակասության մեջ գտնվել, որովհետև արտադրողական ուժերը կարող են լրիվ չափով զարգանալ միայն այն դեպքում, եթե արտադրական հարաբերությունները համապատասխանում են արտադրողական ուժերի բնույթին, դրությանը և լայն ասպարեզ են տալիս արտադրողական ուժերի զարգացմանը»։[1]

Այսպիսով, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը, նրանց հարաբերությունները ու փոխազդեցությունները հանդիսանում են մարքս-լենինյան պերիոդիզացիայի հիմնական չափանիշներից մեկը։

Եվ վերջապես երրորդ կարևոր գործոնը, որ մենք պետք է նկատի ունենանք պատմության պերիոդիզացիան կատարելիս, արտադրական հարաբերությունների փոփոխության, հին արտադրական հարաբերություններից նորին անցնելու ռևոլուցիոն բնույթն է։

Ընկեր Ստալինը անդրադառնալով այս գործոնին, գրում է. «Մինչև մի որոշ ժամանակաշրջան արտադրողական ուժերի զարգացումը և փոփոխությունները արտադրական հարաբերությունների բնագավառում ընթանում են տարերայնորեն, մարդկանց կամքից անկախ։ Բայց այդ միայն մինչև մի որոշ մոմենտ, մինչև այն մոմենտը, երբ ծագած ու զարգացող արտադրողական ուժերը կկարողանան, ինչպես հարկն է՝ հասունանալ։ Նոր արտադրողական ուժերի հասունանալուց հետո, գոյություն ունեցող արտադրական հարաբերությունները և դրանց կրողները՝ տիրող դասակարգերը, դառնում են «անհաղթահարելի» արդելը, որը ճանապարհից կարելի է հեռացնել նոր դասակարգերի գիտակցական գործունեությամբ միայն, այդ դասակարգերի բռնի գործողությունների միջոցով, ռևոլուցիայի միջոցով»։[2]

Այսպիսով, սեփականատիրական լագերում արտադրողական ուժերի արտադրական հարաբերությունների զարգացումն իր արտահայտությունն է գրանում դասակարգային պայքարի բնագավառում, որն ի վերջո հանգեցնում է ռևոլուցիոն ճանապարհով հին արտադրական հարաբերությունների լիկվիդացմանը։

Հետևաբար, պերիոդիզացիան կատարելիս, պետք է հետևել ոչ միայն ար-

[1] Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 165—167։

[2] Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 178—179։

տաղրողական ուժերի և արտադրական հարաբերությունների բնագավառներում տեղի ունեցող փոփոխությունների զարգացման ընթացքին, այլև այդ փոփոխությունների հանդես գալուն՝ դասակարգային հարաբերություններին, դասակարգային պայքարի բնագավառում։

Դասակարգային սուր պայքարը և առանձնապես նրա բարձրագույն ձևը՝ ապստամբությունը, առաջնակարգ նշանակություն ունի սեփականատիրական հասարակության զարգացման և նրա ճիշտ ստորաբաժանման համար։

Մարքսիզմի կլասիկները շարադրելով հասարակական այս կամ այն ֆորմացիայի պատմությունը, միշտ էլ ելակետ են ունեցել դասակարգային պայքարը։

«Մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր հասարակությունների պատմությունը եղել է դասակարգային պայքարի պատմություն»,[1]— ասված է «Կոմունիստական պարտիայի մանիֆեստում»։

Վ. Ր. Լենինը իր «Լեկցիաներ պետության մասին» աշխատության մեջ նշել է, որ «Մարկատերերը և ստրուկները առաջին խոշոր բաժանումն են ըստ դասակարգերի»։- Անդրադառնալով այդ նույն հարցին, Վ. Ի. Լենինը մի այլ առիթով գրել է. «բավական էր, որպեսզի ստրուկների հուզումները, խռովությունները և ապստամբությունները հանդես գային, որպեսզի «դեմոկրատական» ստրկատիրական պետություններ ցույց տար իր դասակարգային էությունը»։[3]

Ընկեր Ստալինը, տալով ֆեոդալական հասարակարգի կլասիկ բնութագիրը, «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում», գրում է՝

«Շահագործողների և շահագործվողների միջև մղվող դասակարգային պայքարը կազմում է ֆեոդալական կարգերի հիմնական գիծը»։[4]

Այս դիրքերից էլ մարքսիստական պատմագրությունը որոշում է յուրաքանչյուր դասակարգային հասարակության ծագման, նրա արտադրական հարաբերությունների բնույթի, նրա պատմության ստորաբաժանման հարցերը։

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ դասակարգային պայքարը մարքսիզմի կլասիկները երբեք էլ չեն համարել պատմական պրոցեսի միակ չափանիշը։

Քաղաքացիական պատմության ընթացքում, նրա զարգացման տարբեր էտապներում արտադրողական ուժերն ու արտադրական հարաբերությունները հանդես գալով դասակարգային հարաբերությունների ասպարեզում, արտահայտվում են տարբեր ձևերով, մեթոդներով։

Մի դեպքում այն արտահայտվում է դասակարգային սուր բռնկումների, դասակարգային բացահայտ պայքարի ձևով, մյուս դեպքում այդ նույն պայքարի հետևանքով շահագործող դասակարգերը ամրացնում և հզորացնում են պետական ապարատը, նրա վարչական և քաղաքական հաստատությունները, մշակում են նոր օրենքներ, միջոցառումներ՝ դասակարգային պայքարը տրոհելու, թուլացնելու համար։

Այսպիսով, դասակարգային հակամարտությունների վրա խարսխված հասարակական տնտեսական ֆորմացիայի պատմության պերիոդիզացիան կատարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ դասակարգային պայքարի օրգանա-

---

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական Պարտիայի մանիֆեստը, Երևան, 1948, էջ 47։

[2] В. И. Ленин, Соч., т. XXIV, стр. 366.

[3] В. И. Ленин, Соч., т. XXIII, стр. 340.

[4] Համկ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 172։

կան կապն ու փոխհարաբերությունը պատմական պրոցեսի հիմքը հանդիսացող արտադրության եղանակի հետ։

Բայդի այս հիմնական գործոններից, այս կամ այն ֆորմացիայի պատմության պերիոդիզացիան կատարելիս, չենք կարող հաշվի չառնել նաև այս կամ այն երկրի ներքին պայմանները, արտաքին քաղաքական ֆակտորները։

Արտաքին արշավանքները, ներֆեոդալական պայքարը, այս կամ այն երկրի աշխարհագրական, բնական պայմանները, անկասկած է, որ արագացնում կամ դանդաղացնում են հասարակության զարգացումը, դրական կամ բացասական դեր են կատարում ժողովուրդների պատմական ճակատագրում։ Սակայն բոլոր երկրներում էլ, բացի տեղական այս առանձնահատկություններից, զարգացման ընթացքն ունեցել է ընդհանուր, միայն այս կամ այն հասարակությանը հատուկ գծեր։

Մարքսիզմի-լենինիզմի կլասիկները տվել են հասարակության պատմության պերիոդիզացիայի թեորետիկական հիմունքները, որոշել են ֆեոդալական հասարակարգի պատմության պերիոդիզացիայի հիմնական սկզբունքները։

Առաջնորդվելով մարքսիզմի կլասիկների ասույթներով,— մենք փորձել ենք պերիոդիզացիայի ենթարկել Հայաստանի ֆեոդալական շրջանի պատմությունը։

* * *

Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցերին անդրադարձել են կղերա-բուրժուական պատմագրության ներկայացուցիչները։ Օրինակ՝ Մ. Չամչյանն իր «Հայոց պատմութիւն» եռահատոր աշխատության մեջ փորձել է ստորաբաժանման ենթարկել մեր ժողովրդի պատմական անցյալը։

Նա հայոց ամբողջ պատմությունը՝ սկսած պատմական շատ հին ժամանակաշրջանից մինչև 18-րդ դ. վերջերը, ստորաբաժանել է պատմական վեց հիմնական շրջանների և յուրաքանչյուր հատորում ընդգրկել երկու ժամանակաշրջան։

Չամչյանը հայոց պատմության պերիոդիզացիայի յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հիմք է ընդունել այս կամ այն դինաստիայի տիրապետությունը։

«Առաջինն այն է, գրել է Մ. Չամչյանը, յորում տիրեալ պայազատեցին նահապետք հայկազեանք՝ կէս մի ազգային տերութեամբ, և կէս մի արքայական շքով, և ապա կուսակալք։ Երկրորդն է այն, յորում թագաւորեցին Արշակունիք... երրորդն է այն, յորում իշխեցին մարզպանք պարսից և ոստիկանք իշխանութեանն հագարացւոց, ևս և նախարարք հայոց։ Չորրորդն է այն, յորում թագաւորեալ տիրեցին Բագրատունիք։ Հինգերորդն է այն, յորում զօրացան Ռուբինեանք ի Կիլիկիա, մինչև ի բնաջինջ բարձումն տերութեան հայոց։ Վեցերորդն է այն, յորում կային և կան ազգ մեր յանիշխանութեան»։[1]

Ա. Գարագաշյանն իր «Քննական պատմութիւն հայոց» քառահատոր աշխատության մեջ նույնպես փորձեր է կատարել ստորաբաժանելու հայոց պատմությունը։

«Պատշաճ թուեցաւ մեզ, գրում է նա, հայոց պատմութիւնը երկու գլխաւոր ժամանակ բաժանել։ Ա. նախնական և Բ. պատմական։ Նախնական անուանեմք զմիջոցն, որ է ի սկզբանէ մինչև Տիգրան Մեծ (Արշակունի), կամ մինչև

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1784, էջ 50։

90 նախ քան Քրիստոս։ Պատմական անուանեմք զմիջոցն ի Տիգրանայ և այսոր...»[1]

Պրոֆ. Գ. Խալաթյանցը իր „Очерк истории Армении" աշխատության մեջ, մերժելով Չամչյան-Գարագաշյանի ստորաբաժանումը, հայոց պատմությունը բաժանում է երեք հիմնական ժամանակաշրջանների։

Ա. Հին շրջան. Պատմական այս էպոխայի տակ նա վերցրել է Հայաստանի նախաբնիկներից մինչև Արշակունիների անկման ժամանակաշրջանը, այսինքն մինչև 5-րդ գարը։ Բ. Միջին շրջան, որը, նրա կարծիքով, ընդգրկել է 5-րդ դարից մինչև 14-րդ գարը, կամ մինչև հայկական պետականության անկումը և Գ. Նոր շրջան՝ հայկական Կիլիկյան թագավորության անկումից մինչև 20-րդ դարը։

Ըստ պրոֆ. Խալաթյանցի ստորաբաժանման, հին շրջանում կոնսոլիդացիայի է ենթարկվում հայկական պետականությունը, և ստեղծվում է արևելյան տիպի բռնապետություն։ Հին և միջին շրջանների սահմանագիծը նա համարում է քրիստոնեության մուտքը։ Միջին շրջանի պատմության բնորոշ հատկանիշը արդեն հայ եկեղեցու և ֆեոդալիզմի տիրապետությունն է։ Հայոց պատմության նոր շրջանը, զուգադիպել է հայ գաղութների առաջացմանը. հայ ժողովուրդը պատմական այս շրջանում ձգտել է քաղաքական ինքնուրույնության՝ ռուսական գերիշխանության տակ։[2]

Պրոֆ. Ր. Խալաթյանցի առավելությունն իր նախորդներից այն է, որ նա պատմության ստորաբաժանումը կատարելիս հաշվի է առել ոչ միայն առանձին դինաստիաներն ու թագավորների տիրապետության ժամանակաշրջանը, այլև քաղաքական, կուլտուրական և կրոնական գործոնները։

Ն. Ադոնցն իր „Армения в эпоху Юстиниана" աշխատության մեջ փորձեր կատարեց ավելի գիտականորեն շարադրելու ֆեոդալիզմի պատմության պերիոդիզացիայի հարցերը և մշակեց հարցի քննարկման իր մեթոդը։

Ադոնցը հայ հասարակական և քաղաքական կյանքի ելակետային, հիմնական մոմենտը համարեց տոհմը և տոհմային հարաբերությունները. նա ցույց տվեց, որ տոհմական կարգը ու հարաբերությունները սոցիալական անփոփոխ կատեգորիաներ չեն, որ նրանք պատմական զարգացման որոշակի էտապում ենթարկվում են փոփոխությունների և տոհմական կարգերի քայքայման հիմքի վրա բարձրանում են ֆեոդալական հարաբերությունները։

Ն. Ադոնցը ֆեոդալիզմը բնութագրեց որպես «դերագույն քաղաքական իշխանության բաժանվածություն»։ Ֆեոդալական հասարակական հարաբերությունները, ըստ Ադոնցի սխալ տեսակետի ծագում են հղեթ, հանգիստ, առանց բախումների, առանց պայքարի։ Նրա կարծիքով կատարվում է ոչ թե որակական փոփոխություն, ոչ թե անցում նոր որակի, այլ հասարակ մեխանիկական տեղաշարժ, նախկին տոհմապետներն ու ցեղապետներն այդ պրոցեսում վեր են ածվում հողատեր ֆեոդալների։[3] Նրա կարծիքով տոհմային հարաբերությունների անկումը, որին ուղեկցում է դասայնության առաջացումը, հիմնականում ավարտվում է «Տիգրան Մեծի փոթորկալի ժամանակաշրջանում»։[4]

[1] Ա. Մ. Թ ա ր ա գ ա շ յ ա ն, Քննական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, մաս Ա, էջ 1 (ընդգծումներն հեղինակին է Ա. Հ.)։

[2] Г. Халатянц, Очерки истории Армении, Москва, 1910, стр. 3—5.

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ., 1908, стр. 328—338, 410, 455.

[4] Նույն տեղում, էջ 410։

Այսպիսով, Ադոնցը ֆեոդալական հասարակական տնտեսական ֆորմացիայի պատմությունը բաժանում է 4 հիմնական շրջանների՝ ա) հնադույն ժամանակներից մինչև Տիգրան 2-րդի էպոխան։ Այս շրջանը, նրա կարծիքով, տոհմական հարաբերությունների տիրապետության և քայքայման շրջանն էր։ բ) Տիգրան 2-րդի գերիշխանությունից մինչև արաբական արշավանքները։ Պատմական այս էպոխայում արդեն քայքայվում են հին տոհմական կարգերն ու հարաբերությունները և հանդես են գալիս դասայնության ու նախարարական-ֆեոդալական կարգերը։ Գ) Արշակունիների անկումից մինչև ֆեոդալական արշավանքները (արաբական տիրապետությունը ներառյալ)։ Այս շրջանի բնորոշ հատկանիշն այն է, որ արաբները նպաստեցին նախարարական և ֆեոդալական կարգերի քայքայմանը, դ) Արաբական տիրապետության վերջին շրջանից մինչև մոնղոլա-թաթարական արշավանքները։ Պատմական այս ժամանակաշրջանում «նախարարական կազմակերպությունն» ապրում է իր քայքայման մայրամուտը և ֆեոդալական հասարակարգը պատմական թատերաբեմից չքանում է։[1]

Սակայն ինչով են փոխարինվում նախարարական ֆեոդալական կարգերը Հայաստանում, մոնղոլների տիրապետության էպոխայում հասարակական և քաղաքական ինչպիսի հարաբերություններ են ստեղծվում, այս կարևոր հարցը բաց է մնում Ադոնցի տեսադաշտից։

Հայոց պատմության պերիոդիզացիայի հարցերը գրավել են նաև Լեոի ուշադրությունը։ Լեոն իր «Հայոց Պատմության» երկրորդ հատորում հայ ժողովրդի պատմական ողջ պրոցեսը ստորաբաժանում է՝ ա) Հին դարեր, կամ հին պատմություն, որը նախորդել է միջին դարերին և ընդգրկել է նախամարդուց մինչև 5-րդ դարը. բ) Միջին դարեր, հաջորդում է հին դարերին, սկսվում է 5-րդ դարից և ձգվում է մինչև 15-րդ դարը, և տեղի է տալիս երրորդ մեծ շրջանին, կամ նոր ժամանակաշրջանին։

Լեոն առաջինն էր անցյալի պատմագրության մեջ, որ նշեց, թե՝ «Այս բաժանումները պայմանական են», որ «չի կարելի ասել... թե մարդկության համար ամեն տեղ միևնույն կերպարանքն ունեին բոլոր մեծ ժամանակաշրջանները— հին դարերը, միջին դարերը, նոր ժամանակները»։[2]

Պատմական այս երեք մեծ ժամանակաշրջանները, ըստ Լեոի բնորոշվում և մեկը մյուսից տարբերվում են «իրենց ոգով, իրենց քաղաքական-հասարակական ձգտումներով, իրենց տնտեսական գաղափարներով։

Ակադ. Հ. Մանանդյանը իր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի պատմությունը ստորաբաժանում է հետևյալ կերպ—

Ա. Տոհմային ձևերի բեկումը և դասերի ու ֆեոդալիզմի ծագումը հին Հայաստանում ոստ հեղինակի պետք է դնել ոչ թե Արտաշեսի, Զարհեի և Տիգրան Մեծի ժամանակ, ինչպես արել է Ադոնցը, այլ նախորդ, ավելի հնադույն շրջանում։

Ակադ. Հ. Մանանդյանը հակված է ենթադրելու, որ «ֆեոդալականության որոշ սաղմերը, կարող են առանձնահատուկ լինել հենց խալդական մեծ պետություններ»[3]

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. стр. 406.

[2] Լեո, Հայոց պատմություն, հ. 2-րդ, Երևան, 1947։ էջ 3։

[3] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 257։

Ուրեմն «ֆեոդալականության որոշ» սաղմերը հայկական բարձրավանդակում հանդես են դալիս 8—6-րդ դարերում ն. մ. թ., նրանք զարգանում են «Արտաշեսից, Զարեհից և Տիգրան Մեծից առաջ ընկած նախորդ շրջանում, իսկ այս երջիններիի էպոխան արդեն ուներ «ֆեոդալական կազմություն և նախարարական հիմքեր»։

Բ. Երկրորդ մեծ շրջանը ակադ. Հ. Մանանդյանը համարում է «Տիգրան Մեծի էպոխայից մինչև 14—15-րդ դարերը։ Այս շրջանի առանձնահատկությունն այն է, որ հայկական ֆեոդալիզմը, որի աստիճանական ծագումը մենք ենթադրել էինք նախարտաշեսյան շրջանում և վերջնական քայքայումը 14—16-րդ դարերում, եղել է, անտարակույս, Հայաստանի անցյալի հիմնական առանցքը նրա պատմական զարգացման գրեթե բոլոր շրջաններում մինչև պարսից և օսմանյան տիրապետությունը»։ «Հայկական ֆեոդալիզմի քայքայմամբ ֆեոդալիզմը Հայաստանում ոչ թե վերանում է, ինչպես ենթադրել է Ադոնցը,— շարունակում է հեղինակը,— այլ փոխարինվում է «պարսկական» և «օսմանյան յուրահատուկ ֆեոդալիզմով»։[1]

Ն. Ադոնցի և ակագ. Հ. Մանանդյանի կողմնակի կերպով մատնացույց արած «հավերժ ֆեոդալիզմի» թեզը ընդունեց և զարգացրեց Խ. Սամվելյանը։

«Հայկական ֆեոդալիզմը,— գրում է պրոֆ. Խ. Սամվելյանը,— երկար ու ձիգ դարերի զարգացման պատմություն ունի։ Իսկապես Հայաստանի, կամ հայոց ամբողջ պատմությունը մինչև 18-րդ դարը ոչ այլ ինչ է, քայց եթե ֆեոդալիզմի պատմություն»։[2]

Պրոֆ. Խ. Սամվելյանը «Հայկական ֆեոդալիզմի պատմությունը» ստորաբաժանում է երեք հիմնական շրջանների՝ ա. հայկական վաղ ֆեոդալիզմ (6—1-ին դդ.), բ. նախարարական ֆեոդալիզմը (1—3-րդ դդ.) և գ. իշխանական ֆեոդալիզմ (13—18-րդ գ. գ.)։[3]

Հայաստանում և Ադրբեջանում ֆեոդալական հասարակարգի պատմության զարգացման յուրահատուկ սխեմաներ է սահմանել պրոֆ Ի. Պ. Պետրուշևսկին իր „Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI– начале XIX вв.“ աշխատության մեջ։ Պրոֆ. Ի Պետրուշևսկին սահմանել է Հայաստանի ֆեոդալական հասարակարգի պատմության հետևյալ սխեման՝

Առաջին շրջան— մեր էրայի 4—6-րդ դարերը. Աղվանքում (Արանում— Հյուսիսային Ադրբեջան) և Հարավային Ադրբեջանում—անցման շրջան՝ նահապետական ստրկությունից՝ նահապետական ֆեոդալական հասարակարգի, Հայաստանում՝ ֆեոդալական հասարակարգի ձևավորում։

Երկրորդ շրջան— 10—12-րդ գարեր— երկու երկրներում էլ ֆեոդալական արտադրական եղանակի զարգացումը, ստրկական և նահապետական կացուլյաձևերի պահպանման հետ միասին (վերջինները քոչվորական ցեղերի մոտ լեռնային բարձր շրջաններում)։ Ռազմա-ավատական սիստեմի զարգացումը։

Երրորդ շրջան— 13—15-րդ դարեր— երկու երկրներում էլ ֆեոդալիզմի

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 257։

[2] Պրոֆ. Խ. Սամվելյան, Ստրկությունը հին Հայաստանում (տես ՀՍՍՌ Պատմ. և գրակ. ինստիտուտի Տեղեկագիր, Երևան, 1937, գիրք 2-րդ, էջ 92), նույնի Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 102։

[3] Նույն տեղում, էջ 92—95, 97 և հաջորդներր։

զարգացման պրոցեսի ավարտումը։ Էքսպլուատացիոն ձևերի ամրացումը հողին։ Ռազմա-ավատական սիստեմի ավարտումը»[1]։

Հայաստանում ֆեոդալական հասարակարգի պատմության պերիոդիզացիայի փորձեր է կատարել նաև պրոֆ. Ա. Աբրահամյանը։

Պրոֆ Ա. Աբրահամյանն իր նախորդների օրինակով հայոց ամբողջ պատմությունը ստորաբաժանում է 4 հիմնական ժամանակաշրջանների։ ա) Հին շրջանը— նախնական համայնական հասարակության շրջանից մինչև մեր թվարկության առաջին դարի կեսերը։ բ) Միջին դարերը, մեր թվարկության առաջին դարի կեսերից մինչև 18-րդ դարը ներառյալ, գ) Նոր շրջանը— 19-րդ դարի սկզբից մինչև սովետական կարգերի հաստատվելը և դ) Նորագույն շրջանը— սովետական ժամանակաշրջանը։[2]

Այսպիսով, անցյալի կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները ընդհանրապես ժխտել են ֆեոդալական հարաբերությունների առկայությունը հին Հայաստանում։

Բուրժուական պատմագրության ներկայացուցիչները ֆեոդալական հասարակարգը բնութագրել են, որպես քաղաքական իշխանության տրոհվածության, որպես իրավական քաղաքական հարաբերությունների մեխանիկական միասնություն։

Նրանք լավագույն դեպքում հասարակական հարաբերությունների հիմքում դրել են «տոհմական» կապերն ու հարաբերությունները, «տոհմական» սկզբունքի և «պետականության» պայքարը այդ «սկզբունքի» դեմ և այս գործոնով էլ բացատրել են պատմական պրոցեսի ընթացքը։

Բուրժուական պատմագրության ներկայացուցիչները ֆեոդալական հարաբերությունների առկայությունը հին Հայաստանում համարել են «շատ հին ժամանակաշրջանի արդյունք» և նրա «վախճանը» լծորդել են արտաքին կարգի գործոնների, արտաքին արշավանքների հետ (Ն. Ադոնց)։

Ավելին, նրանք «հայկական ֆեոդալիզմը, տոհմական հարաբերությունները համարել են «հավերժ», «անփոփոխական» կատեգորիաներ, զարգացրել են այն հակապատմական, հակամարքսիստական դրույթը, որ իբր հին Արևելյան երկրները հանդիսացել են «հավերժ» ֆեոդալիզմի երկրներ «իրենց արևելյան դանդաղաշարժությամբ», որ իբր հին Արևելքում «հասարակության զարգացման և ոչ մի օրինաչափություն գոյություն չի ունեցել»։

Այս ստորաբաժանումներն այսօր այլևս մեզ չեն բավարարում։ Այս ստորաբաժանումներում գիտականորեն չեն շարադրված ֆեոդալական հասարակարգի ծագման, զարգացան պատմությունը, չեն բացահայտված պատմական պրոցեսի հիմնական մոմենտները, պատմական երևույթների փոխադարձ կապը, նրանց ներքին զարգացման օրինաչափությունը, ստորաբաժանելով հայ ժողովրդի պատմությունը «տոհմական հարաբերությունների տիրապետման, ֆեոդալիզմի ձևավորման, ֆեոդալիզմի անկման, կամ հին, միջին, նոր կամ նորագույն ժամանակաշրջանների մեջ, անցյալի և մեր օրերի հետազոտողները փորձեր չեն կատարել տալու պատմական յուրաքանչյուր էպոխաների առանձին էտապների զարգացման յուրահատկությունները ու առանձնահատկու-

[1] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., М—Л., 1949, стр. 87—88.

[2] Պրոֆ. Ա. Աբրահամյան, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը, տես ԳՍ. Տեղեկագիր, Երևան, 1947, էջ 44։

թյունները, իսկ այս անշափ կարևոր է պատմական պրոցեսի օրինաչափությունը, երևույթների փոխադարձ կապը, պայմանավորվածությունը, ներքին հակասությունները և միասնություն հասկանալու համար։ Ավելին, անցյալի հետազոտողները հասարակական-պատմական երևույթների բացատրման հիմքում դրել են այս կամ այն գործոնը՝ աշխարհագրական միջավայրը, արտաքին արշավանքները, էկոնոմիկայի զարգացումը, «պատերազմական ժամանակի տադնապը», «տնտեսական հեղաշրջումը, առանձին իշխողների, թագավորների գործունեությունը, առանձին դինաստիաների առկայությունը և ոչ թե պատմական գործոնների ամբողջական կոմպլեքսը։ Նրանց տեսադաշտից դուրս են մնացել այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են արտադրական ուժերի զարգացման աստիճանը, արտադրական հարաբերությունների պատմությունը, վերնաշենքային, կուլտուր-պատմական գործոնները և դասակարգային հակամարտությունները ու պայքարը։ Այս է հիմնական և գլխավոր պատճառը, որ չնայած նրանց հաճախակի ճիշտ կռահումներին, խիզախ եզրակացություններին, բընագատական մոտեցմանը, ֆեոդալական հասարակարգի պատմության հիմնական հարցերը մնացել են անլուծելի։

* *

Հայ ժողովուրդն իր էթնիկական հատկանիշներով, իր տնտեսական, կուլտուրական, կենցաղային սովորություններով և լեզվական առանձնահատկություններով պատմական թատերաբեմ չբարձրացավ հանկարծակի, այլ հանդիսացավ պատմական հսկայական ժամանակաշրջան ընդգրկող պրոցեսի արգասիք։ Նա, որպես ժողովուրդ, պատմականորեն ձևակերպվեց այն տերիտորիայում, որտեղ մի ժամանակ իշխում էր ուրարտական հզոր պետությունը։ Այդ տերիտորիան հետագա դարերի ընթացքում հանդիսացավ հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական կյանքի կենտրոնը։ Հայ ժողովուրդը ժառանգելով Վան թագավորության բարձր կուլտուրան, հողամշակման ձևերը, այգեգործությունը, կառուցման արվեստը, մետաղամշակությունը, արհեստները, ասպարեզ իջավ որպես ավելի կուլտուրական ժողովուրդ։

Պատմության թատերաբեմ բարձրացած արմեն-հայերի զբաղմունքի, հասարակական և քաղաքական ու դասային հարաբերությունների նկարագիրը մեզ թողել է Քսենեֆոնը իր «Կիրոպեդիա» և «Անաբազիս» աշխատություններում։ Քսենեֆոնը վկայում է, որ մեր թվարկությունից առաջ 6—5-րդ դարերում արմեն հայերի մոտ տոհմական կապերն ու արյունակցական հարաբերությունները ապրում էին նյութական և սոցիալական խիստ դիֆերենցիացիայի մի շրջան։

Նա Արմենիան կոչում է «մեծ և հարուստ» երկիր։ Արմենների տները կահավորված էին տնային կահ-կարասիներով, պղնձյա ամաններով, արմեններն ունեին ընտանի կենդանիներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ոչխարմներքներ, ոգելից խմիչքներ, յուղեր, խոզի ճարպ, կնճիթ, դառն նշի և բևեկնի և նույնիսկ անուշահոտ յուղեր։ Արմենները մշակում էին ցորեն, գարի, կտավատ, կանեփ, ունեին պտղատու այգիներ։ Բնակիչները մեծ մասամբ դյուղացիներ էին, որոնք ապրում էին գյուղերում, կային ատրուկներ, ծառաներ, «երևելի» և «պատվավոր» արմեններ։ Արմենները ծանոթ էին քաղաքներին և քաղաքային կյանքին։[1]

1 Քսենոֆոն, Կիրոպեդիա, հատված 1-ին, գիրք 2-րդ, գլ. 1—6, հատված 2-րդ, գլ. 4. հատված 4-րդ, գիրք 3-րդ, էջ գլ. 1-ին, հատված 6-րդ, գիրք 3-րդ, գլ. 1-ին, հատված 7-րդ, գիրք 3-րդ, գլ. 2-րդ, հատված 6,րդ, գիրք 3-րդ, գլ. 2-րդ, հատված 5-րդ,գիրք 3-րդ, գլ. 1-ին.

Խիստ կերպով շերտավորված էր արմենական բանակը։ Բանակում կային զրկիրներ, վայտակիրներ, բեռնակիրներ, ծառաներ, վարձու զինվորներ։ Քսենոֆոնը հիշատակում է արհեստավորների, առևտրականների առկայությունը։ Արմենների թագավորը, «պատվելի» և «երևելի» արմենները կուտակել էին դրամական հսկայական հարստություն։ Միայն թագավորի հարստությունը կազմում էր 3 հազար տաղանդ, կամ 12.000.000 ոսկե ռուբլի։[1]

Արմենները Քսենոֆոնի էպոխայում հարկատու էին իրենց թագավորին, «երևելի և պատվելի» արմեններին, Միդիային և հետո Պարսկաստանին։

Այսպիսով, Քսենոֆոնի էպոխայում մենք չենք կարող խոսել անփոփոխ տոհմի, տոհմական կապերի և հարաբերությունների մասին, ինչպես այդ փորձել են անել Ն. Ադոնցը, Լեոն և ուրիշները։

Արմեն հայերի մոտ տոհմի մեջ տեղի ունեցած այս կարևոր տեղաշարժերն ու փոփոխությունները հասկանալու համար, անհրաժեշտ է հիշատակել, որ արտադրողական ուժերի զարգացումը, արտադրական հարաբերությունները և դասային ընդգծված շերտավորումը նրանց մոտ գտնվում էր զարգացման ավելի բարձր աստիճանում, քան մինչև այժմ մենք կարծել ենք։

Հայտնի է, որ նախնադարյան համայնական կամ տոհմային հարաբերությունները հիմնված էին արտադրության միջոցների հանրային սեփականության վրա։ Այս էտապում աշխատանքի գործիքներն այնքան կոպիտ ու պրիմիտիվ էին, որ արտադրության այդ կարգի միջոցների և մասնավոր սեփականության վրա հիմնված անհատական արտադրություն անկարող էր ու անզոր՝ ապահովելու անհատի ֆիզիկական գոյությունը, սնունդ հայթայթելու ամբողջ տոհմին։

Արտադրության գործիքների զարգացման ու փոփոխությունների հետ միաժամանակ հենց տոհմական կարգերում նրանց համապատասխան փոփոխվում են մարդկանց արտադրական և տնտեսական հարաբերությունները։

Արտադրության միջոցները, աշխատանքի գործիքները նախնադարյան համայնական հասարակարգում նույնպես գտնվում էին շարժման և զարգացման մեջ, նրանք զարգանում էին նաև արտադրական հարաբերությունների ակտիվ ներգործության տակ և որոշ էտապում առաջ էին բերում արտադրության միջոցների մասնավոր սեփականություն։

Այս պրոցեսում, վճռական դեր է հատկացվում աշխատանքի գործիքների կատարելագործմանը։ Սկզբնական շրջանում օգտագործված քարի, քարե գործիքների փոխարեն, հիմա հանդես են գալիս թոխրը, հողամշակման պրիմիտիվ այլ գործիքներ, որոնք օգտագործվում են դեռ կոլեկտիվ աշխատանքում։

Մետաղյա գործիքների հանդես գալու և կենդանիներին, որպես քաշող ուժ օգտագործելու՝ ժամանակաշրջանից սկսած, արմատական փոփոխություններ են մտնում նաև աշխատանքի պրոցեսում։ Աշխատանքի կատարելագործված գործիքների և կենդանի՝ քաշող ուժի օգտագործումը, արդեն հետին պլանի վրա են մղում կոլեկտիվ աշխատանքը և հնարավոր դարձնում առանձին ընտանիքների մասնավոր սեփականությունը։

Պատմական այս էպոխայում նախնադարյան համայնական կարգերի արտադրական հարաբերությունները, որոնք հիմնված էին արտադրության հան-

---

[1] Ակսպ. Հ. Մանանդյան, Վենական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. I, Երևան, 1941, էջ 38–39, ծանոթ. № 1։

բային սեփականության վրա՝ սկսում են տրոհվել, քայքայվել։ Արտադրության նոր ուժերի հետագա աճը, հրամայաբար պահանջ է առաջադրում՝ վերացնել տոհմական կառուցվածքը, արյունակցական ուժեղ կապերը, արտադրության նոր ուժերի զարգացման կապանքները, որոնք այնքան ուժեղ կերպով խանգարում էին մարդկանց մեջ սկսված տնտեսական, տերիտորիալ կապերի ընդլայնմանը։

Նախնադարյան համայնական հասարակության էկոնոմիկայում տեղի ունեցած փոփոխությունները ու տեղաշարժերը առաջ բերեցին համապատասխան փոփոխություններ այդ հասարակարգի արտադրական հարաբերությունների բնագավառում։ Սկզբնական շրջանում արտադրության միջոցների ու սպառման առարկաների մասնավոր սեփականությունը իր հետ միաժամանակ առաջ բերեց այդ միջոցների և սպառման առարկաների նկատմամբ առանձին ընտանիքի սեփականությունները։ Տոհմից առանձնացած, մասնավոր սեփականության վրա խարսխված առանձին ընտանիքներ միացան և կազմեցին գյուղական, տերիտորիալ-տնտեսական կապերի վրա հենված համայնքներ։

Գյուղական, տերիտորիալ-տնտեսական կապերի վրա խարսխված այս կարգի համայնքների նկարագիրն է, որ պատկերավոր կերպով տալիս է Քսենոֆոնը։

Այսպիսով, Քսենոֆոնի էպոխան մենք կարող ենք բնութագրել որպես գյուղական համայնքների տիրապետության էպոխա։

Գրավոր աղբյուրներում հիշատակված «ավագները», «դեղջավագները», «երեցի» և «պատվելի» արմենները, թագավորի արքունիքի ու սերնդի անդամները աստիճանաբար, համառ և հետևողական կերպով ընդարձակելով իրենց հողային տիրույթները, քաղաքական իշխանությունը, գրոհում են գյուղական համայնքների վրա և սահմանափակում նրանց իրավունքները։

Այս էպոխայի վերջում մենք նկատում ենք մի նոր, մինչև այդ չտեսնված երևույթ։ Նախկին «տոհմապետների»՝ ստրկատերերի կողքին հանդես են գալիս հողատերերի տարբեր խավեր, տարբեր ներկայացուցիչներ։

Տնտեսական երեք՝ համայնական, ստրկատիրական և՝ այդ էպոխայի վերջում հանդես եկած ֆեոդալական կացութաձևերի մեջ մղվում է կատաղի պայքար գերիշխանություն ձեռք բերելու համար և Արշակունիների էպոխայում հաղթանակում է ֆեոդալական կացութաձևը։ Եվ պատահական չէ, որ Մ. Խորենացին հայկական ֆեոդալական հարաբերությունների, նախարարական հողատիրության և նախարարական դասերի քաղաքական իշխանության կոնսոլիդացիան կապում է Վաղարշակ-Տրդատ Արշակունի դինաստիայի առաջին ներկայացուցչի ժամանակաշրջանի հետ։

Արշակունիների օրոք, նրանց քաղաքական տիրապետության առաջին դարերում տոհմական կարգերի ու հարաբերությունների էպոխայից պահպանված սոցիալական տերմինները՝ «տունը», «աղգը», «տոհմը», «տոհմապետը», «ավազը», «գեղջավագը» ստանում են նոր իմաստ և արտահայտում են մինչև այդ անհայտ նոր բովանդակություն։

Արշակունիների տիրապետության առաջին դարերում արդեն հանդես են գալիս «նախարարներ», «նահապետներ», «տերեր», «տանուտերեր», «ազատներ», «ոստանիկներ», «սեպուհներ», որոնք և հանդիսանում են նոր բարձրացող ֆեոդալական պետության սոցիալական հենարանները։

Տնտեսական ֆեոդալական կացութաձևի հաղթանակի պայմաններում, Ար-

շակունիների օրոք, խոշոր փոփոխություններ են տեղի ունենում նաև հասարակական հարաբերությունների բնագավառներում։

Արշակունիների դինաստիայի առաջին դարերը անցան Հայաստանի համար անհամեմատ ավելի խաղաղ պայմաններում, որի հետևանքով ստեղծվեցին պայմաններ նոր հարաբերությունների խորացման ու զարգացման համար։ Այս պայմաններում հայ ռազմա-հողատեր ավագանին ընդարձակեց իր տիրույթները, ձեռք բերեց հողային նոր տերիտորիա և օղակեց գյուղական համայնքը ֆեոդալական ամուր և անքակտելի կապանքներով։ Մեր մատենագիրները հայ խոշոր հողատեր ազնվական դասի ներկայացուցիչներին արդեն կոչում են նախարարներ, իսկ նրանց տիրույթները նախարարություններ։ Հայկական նախարարական-ֆեոդալական դասը, անկասկած, կազմավորվում էր «երևելի», «պատվելի», «հայտնիների» և «տերերի» ու «տանուտերերի» ներկայացուցիչներից, բայց այդ՝ հասարակ քանակական և մեխանիկական փոփոխություն չէր։ Եթե առաջ «տունը» հասկացվում էր որպես տոմհ, ապա այժմ հասկացվում էր նախ և առաջ սեփականություն, կալվածք, հողային տարածություն։ Մեր մատենագիրները արդեն նախարարական տիրույթները կոչում են «տուն», «գավառ», «աշխարհ», «հայրենիք», իսկ սրանց տերերին՝ «տեր», «նահապետ», «նախարար», «հայրենատեր»։ Հայ աղբյուրների վկայությամբ Արշակունյան Հայաստանը հանդիսանում է տիպիկ ֆեոդալական աշխարհ, բաժանված մի քանի տասնյակ վարչական իշխանությունների միջև։ Իրավական տեսակետից առաջին հայացքից հավասար թվացող նախարարական բազմաթիվ տները փաստորեն տարբերվում էին իրենց հողային կալվածքների չափով և քաղաքական իշխանությամբ։

Ֆեոդալական հիերարխիայի գլուխ կանգնած էր Արշակունի թագավորը, որը հանդիսանում էր երկրի գերագույն տերը և հողային կալվածքների իրավական սեփականատերը։ Արշակունիներից հետո քաղաքական ծանրակշիռ դիրք ունեին բդեշխները, ապա Սյունյաց, Մոկքի, Տայքի, Ծոփքի իշխանական նախարարական տները։ Իշխանական նախարարական ավելի քան 50 խոշոր տներից առաջնակարգ տեղ էին գրավում Մամիկոնյանները, Բագրատունիները, Արծրունիները, Խորխորունիները, Կամսարականները, Մարդպետները և այլն։ Ֆեոդալական հիերարխիայում ոչ պակաս տեղ էին գրավում ավագները, կուսակալները, աշխարհակալները, աշխարհատերերը, իշխանները, պետերը և բազմազան ու բազմաթիվ ռազմա-ազնվական ազատանին, ոստանիկները, սեպուհները, գործակալները, դատավորները, զորագլուխները և այլն։ Մեր աղբյուրները բազմազան և բազմաթիվ վկայություններ են թողել հայ Արշակունի թագավորների, թագուհիների, նրանց պալատականների, մեծամեծ նախարարների, բդեշխների, ազատների, աշխարհատերերի և գավառատերերի ընդարձակ կալվածքների, գյուղերի, քաղաքների և նույնիսկ գավառների և աշխարհների մասին։

Արշակունիները սեփական կալվածքներ ունեին Այրարատում, Եկեղյաց պավառում, Դարանաղում, Այրարատում և Հայաստանի մյուս մասերում, սեփական կալվածքներ ունեին նաև հայ եկեղեցին, հայր Մարդպետը և առանձին հոգևորականներ ու նախարարական տներ։ Ահա մի երկու օրինակ։ Փավստոս Բուզանդը Գնելին կոչում է՝ «տէր գաւառին Անձևացեաց», Ղազար Փարպեցին Մ. Կամսարականին անվանում է՝ «տէր Շիրակայ և Արշարունեաց», Անդովքը՝ «նահապետ էր Սյունյաց գաւառին», Պատմիչները Տայքը կոչում են Մամիկո-

նյանների, Ռշտունիքը՝ Արծրունիների, Սյունիքը՝ Սյունյաց տերերի սեփականությունը։ Երազգավառը Բագրատունիների սեփական կալվածքն էր։ Քրիստոնեության մուտքից հետո ընդարձակ կալվածքներ և ֆեոդալական տիպի տնտեսություն ուներ նաև հայ եկեղեցին։ Արդեն 3-րդ և 4-րդ դարերում ֆեոդալական հարաբերությունները այնքան էին խորացել ու զարգացել, հողային մասնավոր սեփականությունն այնքան էր ընդարձակվել, որ հայ Արշակունի թագավորների, առանձին խոշոր նախարարական տների, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների մեջ սրվել էր կատաղի զինված պայքարը՝ նոր կալվածքներ, աշխատող ձեռքեր և քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար։ Արշակունի թագավորների կենտրոնաձիգ ձգտումները հանդիպում էին առանձին, անկախ և հզոր նախարարական ֆեոդալական տների դիմադրությանը և հաճախակի ավարտվում էին Արշակունիների պարտությամբ կամ նախարարական ամբողջ տների ոչնչացմամբ։ Այդ ներքին, ֆեոդալական դաժան, իսկ շատ հաճախ, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, անմիտ, աննպատակ ասպատակությունն ու պայքարը ցնցում էին ֆեոդալական կարգերի հիմքը և ուղի հարթում նրա մասնատվածության համար։ Ֆեոդալական կենտրոնախույս ուժերի պայքարով լի են ամբողջ 4-րդ և 5-րդ դարերը։ Հայտնի է, որ այդ պայքարին զոհ գնացին ոչ միայն առանձին նախարարական տներ, այլև՝ Արշակ 2-րդ, Պապ թագավորները և Ներսես կաթողիկոսը։

Ֆեոդալական արտադրական հարաբերությունների աճի և զարգացման հետևանքով խոշոր փոփոխություններ են տեղի ունենում անմիջական արտադրողի գյուղացու տնտեսական և սոցիալական կյանքում։ Շինականը ֆեոդալական հասարակարգի հիմնական արտադրող դասը, արդեն բռնել էր քայքայման ուղին։ 4-րդ և 5-րդ դարերի մեր մատենագիրները խոսում են շինականների շարքերից դուրս եկած թուանիկների, մշակների, ծառաների, աղախինների, վար և այգի չունեցող գյուղացիների, կարճազատների, բոկոտների մասին, որոնք ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով արդեն կանգնած էին ճորտացման ուղու վրա և գտնվում էին աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներից անձնապես կախման վիճակում։ 4-րդ և 5-րդ դարերում խիստ կերպով ուժեղանում է նաև ֆեոդալական շահագործումը։ Աշխատավճար ռենտայի կողքին, նրա հետ միասին արդեն գերիշխող դիրք է ձեռք բերում արդյունավճար ռենտան։ Գյուղացիների մեջ սկսած սոցիալական և նյութական շերտավորումը ավելի է խորանում արդյունավճար ռենտայի ժամանակ։ Արդյունավճար ռենտայի պայմաններում գյուղացին հարկադիր և ձրի կերպով աշխատում է հողատիրոջ հողի վրա, «իսկ մի քանի ազատ ժամերում իր համար կատարած աշխատանքի արդյունքից նա պարտավոր էր վճարել տասանորդ, չինշ, բահրա և այլ վճարներ տիրոջը, հարկեր հօդուտ իշխանի, ռազմական տուրքեր, տեղական և պետական հարկեր»։[1] Արդյունավճար հարկերը Հայաստանում շատ հին անցյալ ունեն։ Գյուղացիները դեռ բնատուրք էին վճարում Քսենոֆոնի էպոխայում։ Սակայն հետագայում, հատկապես 4-րդ և 5-րդ դարերում, արդյունավճար տուրքերը արդեն վեր են ածվում արդյունավճար ռենտայի։ Այդ մասին մենք բազմաթիվ վկայություններ ունենք մատենագիրների մոտ։ Նկատենք՝ խոսելով Հաղկերտ 2-րդի կողմից Հայաստան ուղարկված Դեն-

---

[1] Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 41։

շասլուհ աշխարհադրի մասին, գրում է, որ նա «զհարկն աշխարհին առաւել ծանրացոյց», պատմիչն ընդգծում է, որ այդ հարկային բազաքականութ/ունից մեծապես տուժեցին շինականները, որոնք ընկան «յոյժ աղքատութեան» մեջ։ Բացի հողային և գլխային հարկերից, գյուղացիները վճարում էին բաժ, սակ, հաս, մուտ, տասանորդ և այլն։ Հայ շինականը հողային և գլխահարկ էր վճարում ինչպես սեփական շահագործող դասերին, այնպես էլ օտար տիրակալներին։ Մատենագիրները շինականի հարկային կացութ/յունը բնորոշելու համար գործ են ածել խիստ բնորոշ արտահայտութ/յուն՝ «ի հարկի ծառայութիւն» կամ «ընդ հարկօք ծառայութիւն» տերմինը, որը հիմնականում տարբերվում էր նախարարների «ի սպասու ծառայութիւն»-ից և ստրուկների «ի ստրկո կարգի» ծառայութիւն»-ից։

Ֆեոդալիզմի զարգացմանը զուգընթաց խոշոր փոփոխութ/յուններ են տեղի ունենում նաև իդեոլոգիայի բնագավառում։ Հայ իշխող նախարարական-ֆեոդալական դասը արդեն շատ լավ էր հասկանում, որ ֆեոդալական հասարակարգի կենտրոնացման ու հզորացման գաղափարական ամենահզոր զենքը հանդիսանալու էր քրիստոնեութ/յունը, ֆեոդալական հասարակարգի այդ նոր իդեոլոգիան։ Այդ էր պատճառը, որ հայ նախարարական-ֆեոդալական դասը 3-րդ դարի վերջերին ընդունեց քրիստոնեութ/յունը որպես պետական պաշտոնական կրոն։ Քրիստոնեութ/յան մուտքը Հայաստան, անկասկած, պատմական այդ էտապում կատարեց բավական ակտիվ դեր՝ ֆեոդալական կենտրոնացած պետութ/յան հզորացման գործում։ Նա նպաստեց ֆեոդալական հարաբերութ/յունների հետագա զարգացմանը, լայն հնարավորութ/յուններ ստեղծեց ֆեոդալական իդեոլոգիայի զարգացման համար։ Քրիստոնեական եկեղեցին ոչ միայն հանդես եկավ, որպես ֆեոդալական կարգերի ջերմ ու եռանդուն պաշտպան, այլև մշակեց ֆեոդալական հասարակարգի նոր օրենսդրութ/յուն, ֆեոդալական կարգերին համապատասխան նիստ ու կաց, կարգ ու կանոն։ Նա հանդես եկավ ամենուր՝ և՛ կենցաղում, և՛ հասարակական ու քաղաքական կյանքում, և՛ ընտանիքում ու արքունիքում։ Քրիստոնեութ/յունը սրբագործեց շահագործումը, իսկ այդ խիստ անհրաժեշտ էր իշխող դասակարգի քաղաքական տիրապետութ/յան հզորացման համար։ Քրիստոնեութ/յունը ֆեոդալական դասին տվեց բանավոր պրոպագանդայի հզոր մի զենք, բայց անհրաժեշտ էր նաև գրավոր, մայրենի լեզվով պրոպագանդա և գրավոր պրոպագանդայի կարևոր միջոցը հանդիսացավ 5-րդ դարի սկզբներին ստեղծված մայրենի լեզվով այբբենարանը։

Էկոնոմիկայի բնագավառում հաղթանակած ֆեոդալական հարաբերութ/յունները լայն ասպարեզ բաց արեցին գրականութ/յան, արվեստի, փիլիսոփայութ/յան, պատմագրութ/յան, աշխարհիկ կառուցումների և կուլտուրայի այլ բնագավառների վերելքի համար։ 4—7-րդ դարերում ոչ միայն զարգացավ մայրենի գիրն ու գրականութ/յունը, այլև ֆեոդալական էպոխայի պատմագրութ/յունն։ Հանդես եկան Ագաթանգեղոսը, Կորյունը, Փ. Բուզանդը, Եղիշեն, Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին, Հովհան Մանդակունին, Եզնիկ Կողբացին, Մամբրե Վերածնողը, Դավիթ Անհաղթը, Ա. Շիրակացին, որոնք առաջ տարան ֆեոդալական կուլտուրան, արվեստն ու գրականութ/յունը, փիլիսոփայական և հասարակական մտքի զարգացման պատմութ/յունը։ Եզնիկ Կողբացին պայքարի դրոշ պարզեց աղանդավորական-սոցիալական շարժումների դեմ և փորձեց փիլիսոփայորեն հիմնավորել ֆեոդալական եկեղեցու վարդապետութ/յունը։

Պատմական այս էպոխայում զարգանում են նաև բեւրականությունը, ճարտասանությունը, տրամաբանությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը, երաժշտությունը։ 7-րդ դարում հանգես է գալիս մաթեմատիկոս, աշխարհագրագետ, տիեզերագետ և տոմարագետ Ա. Շիրակացին, որը ջերմ կերպով պաշտպանում է ֆեոդալական հասարակարգի գաղափարախոսությունը։ 5—7-րդ դարերում զարգացման վերելք է ապրում ֆեոդալական աշխարհիկ թատրոնը, ճարտարապետությունը և կառուցման արվեստը։ Կառուցվում է ճարտարապետական անգերազանցելի կոթող Զվարթնոցը, Արուճի պալատը և բազմաթիվ այլ շենքեր։ Բուռն վերելք են ապրում նաև քանդակագործությունը, նկարչությունը, մոզաիկան և արվեստի այլ հյուղեր։ Կերտվում են այնպիսի աչքի ընկնող հուշարձաններ, ինչպիսիք են Օձունի, Պտղնի, Ավանի, Բալինի, Իրինդի և բազմաթիվ այլ նշանավոր տաճարներ, բերդեր, պետական և պալատական շենքեր։

Ֆեոդալիզմը 4-րդ և 5-րդ դարերում այնքան էր խորացել, որ երկիրը արդեն ապրում էր ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջանը, իսկ ֆեոդալական մասնատվածությունը, ինչպես հայտնի է, ֆեոդալական հասարակարգի կարևոր առանձնահատկություններից մեկն է և հանդես է գալիս այն ժամանակ, երբ զարգանում է խոշոր հողատիրությունը, տարբեր դիրքի ու աստիճանի ֆեոդալները յուրացնում են պետական իշխանությունը և հատկապես իրենց ապահովում են լայն իրավունքներով ու արտոնություններով։ Առաջին ֆեոդալները հանդես են գալիս որպես գործակալներ, դատավորներ, իշխողներ. նրանց ձեռքում է կենտրոնանում նաև քաղաքական իշխանությունը։ Մյուս կողմից՝ ֆեոդալական մասնատվածությունը հնարավոր է դառնում այն պայմաններում, երբ կա արդեն զարգացած ֆեոդալական պետություն և այդ պետության կառավարչական ու վարչական օրգաններն ու նրանց ֆունկցիաները վերջնական ձևավորում են ստանում։

Ֆեոդալական մասնատվածության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ֆեոդալները և նրանցից կախման մեջ գտնվող գյուղացիները ձևավորվում են որպես հակամարտ դասակարգեր։

Ֆեոդալական պետության, իշխող հողատեր դասակարգերի քաղաքական շահերը պահանջում են ստեղծել նաև վարչական և կառավարչական օրգաններ, դատական և վարչական օրենսդրություն։

Հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական դասակարգը 5—7-րդ դարերում մշակում է բազմաթիվ և բազմազան կանոններ, որոնք հետագա պատմիչների մոտ կոչվում են «տուգանանց կանոն»։

Այս բոլոր երևույթները ցույց են տալիս, որ Հայաստանը Արշակունիների օրոք ապրում էր ֆեոդալական հարաբերությունների բուռն զարգացման մի ժամանակաշրջան։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը սրում է նաև դասակարգային պայքարը, ծավալվում են սոցիալական և աղանդավորական շարժումները, որոնք հանդիսանում են ֆեոդալական հասարակարգի զարգացման կարևոր մոմենտներից մեկը։ 3—5-րդ դարերում Հայաստանում դասակարգային պայքարն ու սոցիալական շարժումները հանդես են գալիս տարբեր ձևերով ու մեթոդներով։ Ֆեոդալական շահագործման հարաճուն աճի հետ զուգընթաց ավելի խորանում և սրվում է այդ պայքարը։ Շահագործման ծանր լծից գյուղացիները, ստրուկները, ծառաները, աղախինները, մշակները, ռամիկներն ու շինականները դիմում են մասսայական փախուստի, ապաստան են

պտնում հայկական անմատչելի լեռներում։ Նրանք փախչում են ծանր հարկերից, կուլից, բահրաից, բեկարից, խաշարից, մարդահարկից և այլն։

Փ. Բուզանդը և Մ. Խորենացին մեզ թողել են դասակարգային և սոցիալական սուր հակամարտությունների վառ նկարագիրը։ Տալով Արշակավան քաղաքի կառուցման և անկման պատմությունը, պատմիչները հիշատակում են, որ Արշակավան էին փախչում հարստահարվածները, շահագործվողները, որոնց պատմիչները կոչում են «աւազակք», «ուրիւնահանք», «սպանողք», «վնասակարք», «գանձահատք»։ Սակայն ֆեոդալական հասարակարգի պատմիչների տողերում սպրտնել են նաև այնպիսի մտքեր, որոնք խոսում են այդ պայքարի սոցիալական և դասակարգային բնույթի մասին։ Պատմիչների վկայությամբ Կոգովիթ գավառի հովտում Արշակը կառուցում է իր ավանը, որը շատ կարճ ժամանակամիջոցում «քաղաքայնար մեծացաւ; բազմացաւ և ելից զհովիտն ամենայն»։ Արշակավան են փախչում ֆեոդալ-նախարարների ծառաները։ Արշակ Թագավորը խոշոր նախարարական-ֆեոդալական տների քաղաքական, կենտրոնախույզ ձգտումները սանձահարելու համար հովանավորում է Արշակավան փախած ծառաներին։ Արշակը իր հրամանով խոստանում է բոլորին ազատել դատից ու պատժից, եթե նրանք բնակություն հաստատեն Արշակավանում։ Նախարարները բազմաթիվ անգամ դիմում են Թագավորին և պահանջում, որ նա իրենց ծառաներին ետ ուղարկի նախկին տերերի մոտ, որովհետև «դառնացեալք էին իւրաքանչյուր ի վերայ ծառայեց իւրոց և յանցաւորաց», սակայն Արշակը «ոչ լուաւ նոցա», այն ժամանակ, հայ նախարարները կազմում են միացյալ ճակատ և գրոհում են Արշակավանի վրա։ «Հարին զնա սրով սուսերք յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց», նախարարները, ըստ Խորենացու, ոչ միայն սրի էին քաշում իրենց ծառաներին և նրանց կանանց, այլև այնքան են զայրանում, որ իրար մեջ են բաժանում և գերի տանում ծառաների երեխաներին որպես «զհեռավոր թշնամեաց»։ Սակայն Արշակավանի պատմությամբ չի սպառվում դասակարգային սուր հակամարտությունները։ 4-րդ դարում հանդես են գալիս բորբորիտների և մծղնեականների աղանդները, որոնք պայքարի դրոշ էին պարզում հայ ֆեոդալական եկեղեցու ցոփ և այլասերված բարքերի դեմ և քարոզում են համայնական պարզ կյանք, դեմ են դուրս գալիս անհավասար տկզրունքների վրա խարսխված ամասևությանն։ 4-րդ դարում ինչպես քրիստոնեական ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, մեծ ծավալ է ստանում այսպես կոչված «անապատականների» շարժումը։ Ֆեոդալական կարգերից, ֆեոդալական շահագործումից, աշխարհիկ կյանքից հուսահատված և հուսախաբված մարդիկ մասսայաբար փախչում էին Միջագետքի, Ասորիքի և Աֆրիկայի անապատները, զրկանքներով լի, սակայն, սոցիալական անարդարությունից և շահագործումից ազատ անապատական կյանք վարելու համար։

4-րդ և 5-րդ դարերում դասակարգային և սոցիալական պայքարն այնքան էր սրվել, որ հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները հրավիրում են մի շարք «աշխարհաժողովներ», որտեղ մշակում են խիստ ու դաժան կանոնները «տանջապարտ» շինականներին, ծառաներին, աղախիններին և աղանդավորներին պատժելու համար։ Ասողիկ և Վարդան պատմիչները այդ կանոնները կոչում են «տուգանանց կանօնք» կամ «կանօնք տուգանանց»։

Այս բազմաթիվ փաստերը մեզ բերում են այն եզրակացության, որ Արշակունիների ժամանակաշրջանում Հայաստանը ապրում էր ֆեոդալական հարաբերությունների զարգացման և վերելքի ժամանակաշրջանը։

Երկրի էկոնոմիկայում, քաղաքական կարգերում իդեոլոգիայի և դասակարգային հարաբերությունների բնագավառում տեղի ունեցած վերոհիշյալ արմատական փոփոխությունները և տեղաշարժերը հաստատում են այս դրույթը։

Արշակունիների անկումից հետո, չնայած արաբական, բյուզանդական, սելջուկ թուրքական արշավանքներին ու ասպատակներին, ֆեոդալական հարաբերությունների բնագավառում արմատական և որակական փոփոխություններ տեղի չեն ունենում։ Ճիշտ է, այդ արշավանքներն ու ասպատակությունները կասեցնում են հայ հասարակական կյանքի զարգացման նորմալ ընթացքը, սակայն ֆեոդալական կարգերը ու ֆեոդալական հարաբերությունները հետզհետե, առանձնապես արաբական տիրապետության վերջին էպոխայում, սկսում են խորանալ և ընդարձակվել։ Պատմական իրողություն է այն փաստը, որ Օմար II խալիֆի օրով, հայոց Հովհան Օձնեցի կաթողիկոսը 719 թվին մեկնում է Դամասկոս և վերականգնում է հայ նախարարների ու իշխանների նախկին արտոնություններն ու քաղաքական իրավունքները։ Անկասկած է, որ պատմական այս էպոխայում հայ ժողովրդի վրա ծանրացած էր շահագործման կրկնակի լուծ։ 7-րդ դարի վերջերից սկսած արաբները Հայաստանում մտցրեցին հարկային քաղաքականության նոր սիստեմ, որը խիստ կերպով ծանրացրեց հայ գյուղացու առանց այդ էլ վատթար կացությունը։ Արաբները հարկերի մեծ մասը սկսեցին գանձել դրամով, բայց այդ դրամական ռենտա չէր և նա չէր կարող խիստ փոփոխություն ստեղծել ֆեոդալական սիստեմում։ Արաբների տիրապետության օրով ֆեոդալական սիստեմը մնաց նույնը։ Արաբական տիրապետությունից հետո, առանձնապես 9—10-րդ դարերում, Հայաստանը ապրում է ֆեոդալիզմի զարգացման վերելքի նոր ժամանակաշրջան, որի ընդերքում ձևավորվում են հասարակական նոր, ավելի առաջադիմական հարաբերություններ։ Պատմական այս էխոպայում ֆեոդալական հարաբերությունները ապրում են ոչ միայն քանակական, այլև որակական խորը փոփոխություններ։

9—13-րդ դարի մեր պատմիչները, դրողները, բանաստեղծները, օրենսդիրները՝ Հով. Դրասխանակերտցին, Թոմա Արծրունին, Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը), Գր. Նարեկացին, Ա. Լաստիվերտցին, Մ. Ուռհայեցին, Դր. Մագիստրոսը, Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը, Ն. Լամբրոնացին, Մ. Հնրացին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Այգեկցին, Ֆրիկը, Կոնստանդին Երզնկացին, Ստ. Օրբելյանը, 10—13-րդ դարերի վիմական արձանագրությունները և այդ շրջանի ձեռագիր աղբյուրները, մեզ առատ վկայություններ են թողել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական հողատիրության զարգացման մասին։ Այս շրջանում հողատիրության բնագավառում հանդես է գալիս տերունական նոր ձևի հողատիրությունը, որը պատմիչների մոտ արդեն կոչվում է «հայրենիք», «գանձասպին», «քսակագին», «արծաթագին»։ Այս «հայրենիք»-ները ձեռք էին բերվում գլխավորապես դրամի միջոցով։ Այս էպոխայում հողատեր հանդես է գալիս որպես նաև վաճառական։ Տիգրան Հոնենցը, Դավիթը և Ումեկը և բազմաթիվ այլ իշխանական նախարարական տներ, ոչ միայն խոշոր հողատերեր էին, այլ առևտրական, վաշխառուական դասի ներկայացուցիչներ։

Հայ աշխատավոր ժողովրդի անօրինակ շահագործման հետևանքով կուտակված նյութական և դրամական հսկայական հարստությունը հնարավոր էր դարձրել գյուղերի, կալվածքների, այգիների և նույնիսկ առանձին քաղաքների առուվաճառքը։

Բագրատունիների իշխանական տոհմը տնտեսական այնպիսի հզորության

էր հասել, որ փողով Կամսարականներից գնում էր նրանց հայրենի տիրույթ Անի քաղաքը։ Դրամական այդ միջոցները իշխող դասի ձեռքն էր կենտրոնացել ոչ միայն ծանր հարկերի, այլև առևտրի, վաշխառուության և դրամական շրջանառության հետևանքով։

Առևտրական վաշխառուական դասի տնտեսական և քաղաքական հզորության մասին խիստ արժեքավոր վկայություններ են տալիս ժամանակակից պատմիչները և, առանձնապես, հնագիտական պեղումներն ու վիմական արձանագրությունները։ Վիմական արձանագրությունների համաձայն 10—14-րդ դարերում նոր բարձրացող առևտրական դասի ներկայացուցիչները և այդ շրջանում ներգրավված աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները իրենց «սեփական» միջոցներով կառուցում են ու զարդարում 92 եկեղեցի և վանք, վանքերին և եկեղեցիներին նվիրում են 46 ջրաղաց, 8 ձիթհանք, 3 քաղաք, 1 ամբողջական գյուղ, 4 շրջան, 186 «գանձադին», «դրամադին» երկիր, հայրենիք, գյուղեր, կալվածքներ, 132 այգի, 70 կրպակ, 3 հյուրանոց, 1 ձկնորսարան, 62 դաշտ, արոտավայր, խոտհարք և հսկայական չափերի հասած ոսկի, արծաթ «սպիտակ», «կարմիր» դուկատ, սեփական տներ, բաղնիքներ և այլն և այլն։ Հասկանալի է, որ այս «նվիրատվությունները» իրական պատկերի մի մասն է միայն, սակայն և հարյուրավոր նվիրատվություններ չեն արձանագրվել ու մեզ չեն հասել։

Հարստության կուտակումը հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների, վանքերի և եկեղեցիների, առևտրա-վաշխառուական դասի ձեռքում, սովորական և մասսայական երևույթ էր միջնադարյան Հայաստանում։ Բազմաթիվ օրինակներից բերենք միայն երկուսը։ 1215 թվականին Անիում թողած իր արձանագրության մեջ հայ առևտրական դասի կարկառուն ներկայացուցիչ Տիգրան Հոնենցը արձանագրել է տվել, որ ինքը իր «սեփական» միջոցներով, «իր հալալ գանձով» կառուցել է սուրբ Գրիգորի վանքը և այն զարդարել է «բազում զարդիւք... և պատկերագործ խատերով զարդարեալ ոսկով և արծաթով և ականբք և մարգարտիւ և կանթեղաւք ոսկի և արծաթի». կառուցում է նաև եկեղեցու սպասավորների համար «զամենայն ցեղ բնակարան», տալիս է «հայրենիք»։ Ապա թվարկում է վանքին նվիրված բազմաթիվ գյուղերի, այգիների, ջրաղացների, կրպակների, կալվածքների անունները, որոնք նա «վախմ էր արել» վանքին։

Մ. Ուռհայեցին իր ժամանակագրության մեջ վկայում է, որ աշխարհիկ ֆեոդալներից ետ չէին մնում նաև հոգևոր ֆեոդալները։ Պատմիչի վկայությամբ քորեպիսկոպոս Դավթուկի շարժական կայքը, ոսկին և արծաթը կազմում էին 40 ուղտի բեռ։ Նրա տնից դուրս էին գալիս «Ութ հարիւր վեցկի» եզներ։

10—13-րդ դարերում խորանում էր աշխատանքի հասարակական բաժանումը, գյուղատնտեսությունը անջատվում է արհեստներից և տնտեսական սերտ կապերով լծորդվում ներքին շուկաների հետ։ Տնտեսական այս հիմքի վրա ստեղծվում և զարգանում են քաղաքներն ու քաղաքային կյանքը, ապրանքաշրջանառությունն ու դրամական շրջանառությունը։

Ազգային մատենագիրները վկայում են, որ պատմական այս էպոխայում ագարակները վեր են ածվում ավանների, իսկ ավանները՝ քաղաքների։ Մեր պատմիչները խիստ զանազանություն են դնում գյուղաքաղաքների, քաղաքագյուղերի և քաղաքների միջև։ Այսպես, օրինակ՝ Ավանը, Արուճը, Բագարանը, Երնջգավորքը, Երևանը, Կողբը, Մրենը, Քարունջը, Թալինը, Գառնին և ուրիշ-

ները նրանք կոչում են կամ քաղաքագյուղեր կամ գյուղաքաղաքներ։ Տնտեսական կյանքի բուռն վերելքը ստեղծում է նախադրյալներ գյուղաքաղաքների զարդացման համար, որոնք վերածվում են իսկական քաղաքների։ Ո՛չ աուաջանում և արագ թափով զարգանում են նոր «տիեզերահռչակ» և «աշխարհահռչակ» քաղաքներ Անին, Արծն, Կարսը, Մուշը, Խլաթը, Լոռին, Կապանը, այլ վերապենդանանում են հայկական հին քաղաքները՝ Դվինը, Վանը, Նախիջևանը, Ալվեշը և ուրիշներ։

Ար. Հաստիվերտցու վկայությամբ Կարսը քաղաք էր «յղփացեալ», որն իր հարստությունը կուտակել էր «քաղում ընչերությամբ և ի ծովէ և ի ցամաքէ»։ Նա Կարսը անվանում է «ողբովք լի» քաղաք։ Անին, պատմիչի վկայությամբ, քաղաք էր «անիրաւ», որը կառուցված էր «արյամբ և վաշխից», նա մի քաղաք էր, որտեղ լի էր վիշտը, նենգությունը, զեխ ու ցոփ կյանքը։ Մեր մատենագիրները փորձեր են կատարել բացատրելու Անիի անկման պատճառները և հանդել են այն եզրակացության, որ աշխարհահռչակ Անին խորտակվել է քաղաքացիների հակակրոնական և աշխարհիկ այլասեռված բարքերի հետևանքով։ Քաղաքի բնակիչները այնքան էին հղփացել, որ ոչ ոքի այլևս չէին հավանում, պճնվում էին ու զարդարվում, ուժեղները խլում էին թույլերի կայքը, առանց ալախինների և ծառաների եկեղեցի չէին գնում, նույնիսկ եկեղեցի էին գնում հեծյալ, գնում էին թատրոն, ձիարշավի վայրերը։ Պատմիչի վկայությամբ նրանց լոլորին պատել էր ագահությունը, ավելի շատ արծաթ էին սիրում, քան աստված, այնքան ագահ էին, որ մեկը մյուսից խլում էր նրա բաժինը։ Այս այլասերված, ցոփ և աշխարհիկ կյանքը նկարագրել է ժամանակակից Մ. Ուռհայեցին։

Ուռհայեցու վկայությամբ ո՛չ հայրապետները, ո՛չ վարդապետները, ո՛չ եպիսկոպոսները, ո՛չ քահանաները, ո՛չ աբեղաները և ո՛չ էլ իշխաններն ու ժողովուրդը հավատարիմ չէին մնացել Քրիստոսի պատվիրաններին։ Իշխանները միացել էին գողերին և ավազակներին և զբաղվում էին հափշտակությամբ, դատավորները կաշառակերներ էին և կայացնում էին անարդարացի դատավճիռներ, կրոնավորները թողնում էին եկեղեցիները և վայելում աշխարհիկ կյանքը։ Նրանք սիրում էին աշխարհի բարքերն ու կանանց։ Առաջնորդներն ու իշխանները կաշառակերներ էին, ստախոսներ, նրանք դատաստան էին տեսնում աղքատների, տնանկների հետ։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների, իշխանների, առևտրական դասերի այլասերված կյանքի նկարագրությունը թողել են ոչ միայն պատմիչները, այլև դրողները, բանաստեղծները, օրենսդիրները և այլն։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացումն ու խորացումը, արհեստային արտադրության, քաղաքների և քաղաքային կյանքի բուռն վերելքը արմատական փոփոխություններ են մտցնում անմիջական արտադրողի և՛ տնտեսական, և՛ սոցիալական կյանքում։ Դասային և նյութական շերտավորումը մտել էր իր լիարժեք իրավունքի մեջ։ Գյուղական բնակիչները խիստ կերպով բաժանվում էին, նրանք մասսայական կերպով ամրացվում էին հողին և ճորտացվում։ Հանդես են գալիս նվազունիքները, օրավարձով աշխատողներ և այլն։ Պատմական այս ժամանակաշրջանում Մ. Գոշն իր «Դատաստանագրքում» գյուղացիների ճորտացման պրոցեսը ձևակերպում է նաև իրավաբանորեն։ Մնում էր մի քայլ, որպեսզի այդ իրավունքը ձևակերպվեր նաև պետականորեն, սակայն, ինչպես հայտնի է, Հայաստանը զրկվեց իր պետակա-

նութ[յ]ունից և ճարտական իրավունքի ձևավորման հարցը մնաց իրավական իմաստով անավարտ։

Էկոնոմիկայում և քաղաքական հարաբերութ[յ]ուններում տեղի ունեցած արմատական և որակական փոփոխութ[յ]ունները իրենց հետ բերում են շահագործման նոր ձևեր և մեթոդներ։ Աշխատավճար և արդյունավճար ռենտաների հետ միասին և նրանց կողքին, գերակշիռ դիրք են գրավում դրամական հարկեր։ Այս ժամանակաշրջանում մարդահարկի փոխարեն հանդես է գալիս կառն իր բազմազան ձևերով։ Կուռ կատարում էր գյուղացին, որը վիմական արձանագրութ[յ]ուններում արդեն կոչվում է «մարդոյ կոռ». գյուղացին հաճախակի կառ էր կատարում իր անասուններով, որը կոչվում է «եզին կոռ», կամ երեք լուծ եզների կուռը կոչվում է «վեցկի կոռ»։ Գյուղացին պարտավոր էր ձրի կերպով փոխադրել հողատիրոջ բերքը, որը կոչվում էր «սայլին կոռ», գյուղացին պարտավոր էր փոխադրված բերքը ծեծելու իր սեփական միջոցներով, որը կոչվում էր «կամին կոռ»։

Ֆեոդալական հարաբերութ[յ]ունների, քաղաքների և քաղաքական եյանքի դրամական հարկերի աճն ու զարգացումը խորացնում և սրում էր դասակարգային պայքարը։ Աշխատավոր, շահագործված գյուղացիները այևս պասիվ կերպով չէին կարող տանել սոցիալական այդ անարդարութ[յ]ուն։ 9—13-րդ դարերը հանդիսանում են գյուղացիական ապստամբութ[յ]ունների և սոցիալական շարժումների ժամանակաշրջաններ։ Այդ էպոխայում գյուղացիական ապստամբութ[յ]ուններ. բռնկվեցին Այրարատում, Սյունիքում և վերջապես հանդես եկան Բոնդրակեցիները, որոնք մոտ երկու դար ցնցեցին ֆեոդալական հասարակարգի հիմքերը։

10—13-րդ դարերում Հայաստանում ստեղծված սոցիալական և դասային նոր հարաբերութ[յ]ունների պայմաններում հանդես է գալիս խիստ շերտավորված աշխարհիկ կուլտուրան ու գրականութ[յ]ուն, արվեստը և ճարտարապետութ[յ]ուն։ Աշխարհիկ բարքերը տիրապետող են դառնում ոչ միայն կենցաղում, այլ իդեոլոգիայի և արվեստի բնագավառում։ Պատմական այս շրջանում հրապարակ են իջնում մեծանուն գրողներ, բանաստեղծներ, պատմաբաններ, օրենսդիրներ, փիլիսոփաներ, որոնք իրենց աշխատութ[յ]ուններով գովերգում են աշխարհիկ կյանքն ու կուլտուրան։ Այդ շրջանի հայկական ճարտարապետութ[յ]ունն իր վրա կրում էր աշխարհիկ ոճի և ճաշակի մեծ ազդեցութ[յ]ուն։ Նա իր ձևերով և ոճով հակադրվում է ասպետական և եկեղեցական խստապահանջ ոճին և արտացոլում է աշխարհիկ կյանքի գաղափարներն ու ցանկութ[յ]ունները։ Աշխարհիկ ոճով կոթողներ, դղյակներ, պալատներ են կառուցում ինչպես հին, այնպես և նոր բարձրացող քաղաքներում վաղ վերածննդյան գաղափարախոսութ[յ]ամբ տոգորված այնպիսի մարդիկ, ինչպիսիք են Տրդատր Անիում, Մանվելը Վասպուրականում և բազմաթիվ ուրիշները։ Պատմական այս շրջանում բարձր վերելք է ապրում պատմական և գեղարվեստական գրականութ[յ]ունը։ Հանդես են գալիս այնպիսի պատմաբաններ, ինչպիսիք են կեղծ Շապուհ Բագրատունին, Հ. Դրասխանակերտցին, Թ. Արծրունին, Ս. Տարոնացին, Ա. Լաստիվերտցին, Կ. Գանձակեցին, Ստ. Օրբելյանը և ուրիշները, որոնք՝ արտահայտելով ֆեոդալական հասարակարգի իդեաները, այս կամ այն չափով արծարծել են նաև սոցիալական և աշարհիկ կյանքի գաղափարախոսութ[յ]ուն։ Այս էպոխայում իրենց ստեղծագործութ[յ]ուններով հրապարակ են իջնում Նարեկացին, Հ. Իմաստասերը, Ն. Լամբրոնացին, Ն. Շնորհալին, Ֆրիկը, Կոստանդին

Երզնկացին, Վ. Այգեկցին, որոնք արտահայտում են նաև դասակարգային և սոցիալական սուր հակամարտություններ։ Նրանք պատկերել են սոցիալական բազմաթիվ հուզող հարցեր, խարազանել են շահագործման բիրտ ձևերը և նյութական խիստ շերտավորումը։

Պատմական այս էպոխայում վերելք է ապրում փիլիսոփայությունը, բժշկական գիտությունը, որոնց տաղանդավոր ներկայացուցիչներն էին Ր. Մադիստրոսը, Ամիր Դոլվաթը և ուրիշները։

Ասպիսով, 10—13-րդ դարերը հանդիսացան ֆեոդալական հասարակարգի նոր և ավելի բարձր զարդացման շրջանը և նրա ընդերքում ստեղծվեցին հասարակական քաղաքական նոր հարաբերություններ, որոնք պետք է որ պատռեին ֆեոդալական հարաբերությունները, եթե մեր հայրենիքը 13-րդ դարի կեսերին չդառնար մոնղոլա-թաթարական ասպատակությունների և արշավանքների թատերաբեմ։ Մոնղոլ-թաթարները բեկանեցին, կասեցրեցին հայ հասարակական կյանքի նորմալ զարգացման ընթացքը և նրան հասցրին ծանր ու անբուժելի հարվածներ։ Այդ հարվածներն ավելի խորացրին ու ահարկու դարձրին պարսկա-օսմանյան բռնակալները և հասարակական հարաբերությունների զարգացումը մի քանի դարով ետ տարան։

Ասպիսով, ֆեոդալական հասարակական տնտեսական ֆորմացիայի պատմությունը մինչև 13-րդ դարի ժամանակաշրջանը, մենք ստորաբաժանում ենք հետևյալ հիմնական էտապների՝

1-ին շրջանը ընդգրկում է 1—7 դարերը, պատմական այս ժամանակաշրջանում ոչ միայն ձևավորվում, այլև զարդանում են ֆեոդալական արտադրական հարաբերությունները։ Առաջին դարում սաղմնավորված ֆեոդալական հարաբերություններն առանձնապես իրենց վերելքն են ապրում 3—7 դարերում։ Այս էպոխայում ձևավորվում է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական-նախարարական դասը։ Արագ թափով աճում է ֆեոդալական-եկեղեցական հողատիրություն։ Հանդես են գալիս ոչ միայն պարգևական, այլև ժառանգական անօտարելի հողատիրության սիստեմը։ Ֆեոդալական խոշոր հողատիրության սեփ հետևանքով՝ արմատական և որակական փոփոխություններ են տեղի ունենում անմիջական արտադրողի և՛ տնտեսական և՛ սոցիալական կյանքում։

Համայնքի նախկին ազատ անդամ գյուղացիության բայքայման հետևանքով նրա շարքերից դուրս են գալիս բազմաթիվ ծառաներ, ապահիններ, կարճազատներ, տառապյալներ, վար և այդի չունեցողներ և ճորտացման ուղու վրա կանգնած հասարակական այլ խավերը։ Սակայն այս պայմաններումն էլ գյուղացիության հիմնական մասը դեռ մնում է իրապես ազատ և նրա ու պետության հարաբերությունները որոշվում են միայն հարկատվությամբ։

Ֆեոդալական հարաբերությունների աճի ու զարգացման հետևանքով արմատական փոփոխություններ են հանդես գալիս շահագործման ձևերի և սիստեմի մեջ։ Աշխատավճար ունեցան իր տեղն աստիճանաբար զիջում է արդյունավճար ունեցային, որը և պատմական այս ժամանակաշրջանում դերակշիռ դիրքից անցնում է դերիշխող դիրքի։ Սոցիալ-քաղաքական այս նախադրյալների հիմքի վրա սրվում են սոցիալական հակամարտությունները և դասակարգային սուր պայքարը։ Գյուղացիական մասսաները և՛ անհատորեն և՛ մասսայաբար լքում են տիրոջ հողերը և փախչում երկրի այն մասերը, որտեղ կային աշխատանքի և ապրելու համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններ։

2-րդ շրջանը ընդգրկում է 7—10-րդ դարերը։ Պատմական այս ժամանա-

կաշրջանում Հայաստանը դառնում է արաբա-բյուզանդական էքսպանսիայի թատերաբեմ։ Արաբները, բյուզանգացիները և 11-րդ դարի կեսերին սելջուկյան-թուրքական հորդաները ծանր և անբուժելի հարվածներ են հասցնում մեր երկրի արտադրողական ուժերի զարգացման նորմալ ընթացքին։ Սակայն այս դաժան պայմաններում էլ ֆեոդալական հարաբերությունների մեջ արմատական և որակական փոփոխություններ մենք չենք նկատում։ Արաբները, բյուզանգացիները, սելջուկները չէին բերում և չէին կարող բերել արտադրական նոր հարաբերություններ։ Ֆեոդալիզմն իրեն հատուկ ատրիբուտներով պահպանվեց նաև օտար լծի տակ։

Արաբա-բյուզանդական տիրապետության շրջանում անմիջական արտադրող դարձյալ մնաց գյուղացիությունը։ Սակայն նա դրվեց և՛ տնտեսական, և՛ իրավական ավելի դժնդակ պայմանների մեջ։ Հայ աշխատավոր գյուղացիությունը շահագործվեց կրկնակի չափով։ Նա ո՛չ միայն պարտավոր էր ապահովելու իր սեփական, այլև օտար շահագործող դասերի պահանջները։ Աշխատավճար ռենտայի հետ միաժամանակ արաբները հարկերի և տուրքերի մեծ մասը հավաքում էին դրամով, սակայն այդ դրամական ռենտա չէր, այլ դրսից ներմուծված հարկ։ Ապրանքա-դրամական հարաբերությունների թույլ զարկացման պայմաններում դրամական հարկերի կիրառումը ամբողջապես քայքայեց ժողովրդական տնտեսությունը։

Պատմական այս շրջանում հայ աշխատավոր բնակչությունը պայքարի դրոշ պարզեց ոչ միայն սեփական, այլև օտար շահագործող դասերի քաղաքական տիրապետության դեմ։ Հանդես եկան պավլիկյանները, որոնք պայքարի դուրս եկան սոցիալական անարդարության և անհավասարության դեմ։

3-րդ շրջանը ընդգրկում 10—13-րդ դարերը. պատմական այս էպոխան համարվում է տնտեսական կյանքի, արհեստային արտադրության, դրամական շրջանառության, ապրանքափոխանակության, քաղաքների և քաղաքային կյանքի բուռն զարգացման և աճի ժամանակաշրջան։

Աշխատանքի հասարակական բաժանումը խորը արմատներ է գցում ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, խորացնում է նյութական և սոցիալական շերտավորումը և ուղի է հարթում հասարակական, քաղաքական և դասային նոր հարաբերությունների զարգացման համար։ Այս նորն ամենից առաջ արտահայտվեց հողատիրության և հողային հարաբերությունների բնագավառում։ Նախկին պարգևական և հայրենական կալվածքների փոխարեն նրանց կողքին բարձրանում են «գանձադին», «քսակագին», «արծաթագին», «հալալ գանձով» ղնած հողային նոր տիրույթներ։ Հողը, գյուղերը, ավանները, քաղաքները դառնում են առքի և վաճառքի օբեկտներ։ Հողային նոր տիրույթների մեծ մասն անցնում է նոր բարձրացող առևտրա-վաճառական դասի խոշոր ներկայացուցիչների ձեռքում։ Բնորոշ է, որ արդեն 13-րդ դարում ոչ միայն հողը, այլև տները, այգիները, խանութները, գետերը, լճերը, քաղաքները դառնում են անօտարելի ժառանգական տիրույթներ։ 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանը՝ արտահայտելով իր ժամանակաշրջանի տրամադրությունները, դրում է, որ ինչպես ոսկով ղնածը, այնպես էլ թրով գրավածը «հալալ հայրենիք է մարդոյ»։

Հողային հարաբերություններում տեղի ունեցած այս փոփոխությունները նպաստում են նաև քաղաքների վարդացմանը։ Հանդես են գալիս աշխարհաշոչակ, տիեզերահռչակ մեծ ու փարթամ, բազմաբնակիչ քաղաքներ, որոնք ի-

րենց հերթին խորացնում են սոցիալական հակամարտությունները։ Քաղաքներում հանդես են գալիս շահագործվող դասի նոր խավերը՝ տնանկները, նվաղուն-իքները, օրավարձով աշխատողները, արհեստավորները, ննջաավարպետները, աշակերտները, որոնք ակտիվորեն մասնակցում են գյուղացիական շարժումներին ու ապստամբություններին և նրանց տալիս են համեմատաբար կազմակերպված բնույթ։

Պատմական այս էպոխայում հանդես են գալիս դասակարգային պայքարի նոր, ավելի ակտիվ ձևեր և մեթոդներ։ Հանդես են գալիս հոնդրակեցիները, որոնք շուրջ երկու հարյուր տարի ընթացում են ֆեոդալական կարգերի հիմքերը և ուղի են հարթում հասարակական նոր, ավելի առաջադիմական հարաբերությունների զարկացման համար։

Գյուղացիներն իրենց քաղաքական շահերը պաշտպանելու համար դիմում են զենքի, դուրս են գալիս բացահայտ պայքարի։ Ֆեոդալական պետությունը, նրա պետական ու վարչական ապարատն իրենց հերթին դիմում են վճռական միջոցների՝ տրոհելու, թուլացնելու գյուղացիության ընդդիմադրության ուժը և ամենից առաջ նրան մասսայական կերպով ամրացնում են հողին և հնրտացնում։ Այս էպոխայում ավելի բիրտ ու դաժան է դառնում ֆեոդալական շահագործումը։ Աշխատավճար և արդյունավճար ռենտաների նկատմամբ գերակշիռ դիրք են ձեռք բերում դրամական հարկերն ու տուրքերը։

Պատմական այս էպոխայում արագ վերելք են ապրում աշխարհիկ կյանքը, կուլտուրան, գրականությունը, արվեստը, ճարտարապետությունը, պատմագրությունը, հասարակական և քաղաքական մտքի զարգացումը ու բնական գիտությունները։ Հայաստանը բոլոր գծերով 10—13-րդ դարերում ապրում էր տնտեսական և քաղաքական նոր զարթոնքի ժամանակաշրջան։ Այս պայմաններում ստեղծվում են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու դասային նախադրյալներ, ֆեոդալական հարաբերությունների կապանքները պատռելու համար։ Սակայն 11-րդ դարի կեսերից սկսած սելջուկ թուրքերի, իսկ 13-րդ դարի կեսերից սկսած մոնղոլ-թաթարական արշավանքները բեկանեցին, խորտակեցին այս նոր հարաբերությունների աճն ու զարգացումը և մեր ժողովրդի պատմությունը մի քանի դարով հետ տարան։

Սակայն ինչպես սելջուկ-թուրքերն, այնպես էլ մոնղոլ-թաթարները և ավելի ուշ շրջանում օսմանյան ու պարսկական բռնակալները չկարողացան և չէին կարող ֆեոդալական հարաբերությունների մեջ արմատական փոփոխություններ մտցնել այն պարզ պատճառով, որ նրանք կանգնած էին հասարակական զարգացման ավելի ցած աստիճանում, քան միջնադարյան Հայաստանը։

Ստար, բռնակալական լծի տակ ֆեոդալական հարաբերությունները սկսեցին զարդանալ ավելի դանդաղ, բայց և այնպես նրանք չքացան, չանհետացան։

«Հայկական» ֆեոդալիզմին չեկան փոխարինելու ինչ-որ «մոնղոլական», «օսմանյան», «պարսկական» և այլ կարգի ֆեոդալիզմ։ Ֆեոդալական հասարակական և տնտեսական ֆորմացիան մնաց նույնը, բայց նրա զարգացումը բեկանվեց ու խանգարվեց և այն նոր հարաբերությունները, որ ստեղծվեցին 11—13-րդ դարերում, չաճեցին և ֆեոդալական հարաբերությունների բնագավառում նոր որակական փոփոխություններ չստեղծեցին։